

STOP CORRUPTION.am

Հակակոռուպցիոն ցանցային ամսագիր
պատրաստված Եվրասիա համագործակցություն
հիմնադրամի աջակցությամբ

Հայաստանում գոյություն չունի կոռուպցիայից ազատ հաստատություն - Ամալյա Կոստանյան

Հարցազրույց Թրանսփերենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի նախագահ Ամալյա Կոստանյանի հետ

10.06.2009

StopCorruption (SC) - Ինչպես կրնորոշելիք կոռուպցիան.



Ամալյա Կոստանյան - Կոռուպցիան մասնավոր շահույթի համար վստահված իշխանության չարաշահումն է: Սա իմ բնորոշումը չէ, սա դասական բնորոշում է:

StopCorruption (SC) - Ինչպես կնկարագրելիք այսօր կոռուպցիայի չափերը Հայաստանում:

Ամալյա Կոստանյան - Հայաստանը մի երկիր է, որտեղ կոռուպցիան ծաղկում է և այն վարակել է երկրի բոլոր հաստատությունները: Թեև ադմինիստրատիվ կոռուպցիան տեսանելի է և հեշտությամբ բացահայտելի, քաղաքական կոռուպցիան թաքնված է և այն բարդ է բացահայտել: Սակայն հաշվի առնելով այն, որ Հայաստանում կոռուպցիան ունի սիստեմատիկ բնույթ, միամտություն կլինեք կարծել, որ առանց պայքարելու քաղաքական կոռուպցիայի դեմ, հնարավոր կլինի վերացնել ադմինիստրատիվ կոռուպցիան: Սա մեր այսօրվա իշխանությունները փորձում են "վաճառել" և Հայաստանի քաղաքացիներին և միջազգային հանրությանը:

StopCorruption (SC) - Որոնք են կոռուպցիայի դեմ պայքարելու պատճառները:

Ամալյա Կոստանյան - Քանի որ կոռուպցիան կանգնեցնում է երկրի քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացումը, շատ կարևոր է այն իջեցնել կառավարելի մակարդակի:

StopCorruption (SC) - Ինչու եք հավատում, որ կոռուպցիայի դեմ պայքարը կպսակվի հաջողությամբ.

Ամայա Կոստանյան - Որովհետև ես գիտեմ օրինակներ, թե ինչպես այլ, բավականին կոռումպացված կառավարությունները արել են դա: Եվ ես հուսով եմ, որ առողջ դատողությունը կհաղթանակի և կօգնի հասկանալու, թե ինչպիսի կործանարար ազդեցություն է ունենում կոռուպցիան Հայաստանի պես փոքր երկրի համար, և մենք՝ հայերս, կդադարենք հանդուրժել և սնուցել կոռուպցիան:

StopCorruption (SC) - Կարծում եք արդյոք, որ հայ հասարակությունը կոռումպացված է: Եթե այո, ապա ինչ է կոռումպացված հասարակությունը:

Ամայա Կոստանյան - Հայաստանում գոյություն չունի կոռուպցիայից ազատ հաստատություն: Հասարակությունը կոռումպացված է, երբ այն ոչ միայն հանդուրժում է կոռուպցիան, այլ դառնում է նրա անբաժանելի մասը՝ այսպիսով ապահովելով կոռուպցիայի շղթայի "պահանջարկ- առաջարկ" հավասարակշռությունը:

StopCorruption (SC) - Դուք կարծում եք, որ կաշառակերությունը դարձել է հայ բնավորության մի մաս, եթե այո, ապա ինչու:

Ամայա Կոստանյան - Շատ պատճառներ կան, դրանցից մեկն այն է, որ մեզ հեշտությամբ էր հաջողվում հարմարվել յուրաքանչյուր իրավիճակին, լավ կամ վատ:

StopCorruption (SC) - Ինչպես եք վերաբերում նեպոտիզմին:

Ամայա Կոստանյան - Չեմ հանդուրժում կոռուպցիայի որևէ ձև:

StopCorruption (SC) - Կարծում եք արդյոք, որ մադարիչը կոռուպցիայի տեսակ է, եթե այո, ապա ինչու:

Ամայա Կոստանյան - Կապ չունի կաշառքը երբ է տրվում (վերցվում), սկզբում կամ վերջում. այն միշտ փչացնում է:

StopCorruption (SC) - Համաձայն եք արդյոք, որ Եվրոպայի հարավային ազգերը ավելի են հակված կոռուպցիային, քան հյուսիսայինները:

Ամայա Կոստանյան - Ես կարծում եմ, որ շատ մարդիկ պարզապես օգտագործում են այդ գաղափարը արդարացնելու իրենց կամ էլ դիսկրիմինացնելու մյուսներին: Չեմ կարծում, որ գոյություն ունի թեկուզ մեկ մշակույթ կամ կրոն, որն արդարացնում կամ խրախուսում է կոռուպցիան:

StopCorruption (SC) - Կարծում եք արդյոք, որ գոյություն ունի "լավ" կոռուպցիա:

Ամայա Կոստանյան - Սա պարզապես կոռուպցիան արդարացնելու այլ ձև է: